

## Ա. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԵՆ

### Հ Ե Ռ Ա Գ Ի Բ Ն Ե Ր

Ա. Զատկի հրաշափառ տօնին առիթով, Ամեն. Ա. Պատրիարք Հօր կողմէ եկեղեցւոյ Սրբազն Պետերուն յղուած են հետևեալ չնորհաւորական հեռագիրները. —

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1980

Նորին Ա. Օծութիւն Տ. Տ. Վազգէն Ա.  
Կոթողիկոս Ամենայն Հայոց  
Ա. Էջմիածին

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Զերդ Սուրբ Օծութեան մեր, Ա. Յակոբանց Միաբանութեան և Սաղիմահայ համայնքին ամենասրագին չնորհաւորութիւնները, մաղթելով Զեղ չարունակական առողջութիւն և երջանկութիւն, իսկ Մայր Աթոռ Ա. Էջմիածնին՝ բարգաւաճում:

Եղիշէ Արքեպոս. Տէրժէրեան  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Նորին Սրբութիւն  
Յովհաննէս - Պողոս Բ. Պապ  
Վատիկան

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1980

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Զերդ Սուրբ Պութեան մեր յարգալից չնորհաւորութիւնները, մաղթելով Զեղ առողջութիւն և երկար տարիներ, և կատարեալ յաջողութիւն՝ Զեր մեծ իտէալներուն:

Եղիշէ Արքեպոս. Տէրժէրեան  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

Ն. Ամենապատութիւն Պիմէն  
Պատրիարք Համայն Խուսիոյ  
Մոսկուա

Երուսաղէմ, 2 Ապրիլ 1980

Մեր Տիրոջ Յարութեան տօնի ուրախ առիթով, կը ներկայացնենք Զերդ Սուրբ Պութեան մեր սրագին չնորհաւորութիւնները, մաղթելով Զեղ տեական առողջութիւն, ուրախ օրեր և արեւատութիւն:

Եղիշէ Արքեպոս. Տէրժէրեան  
Պատրիարք Հայ Երուսաղէմի

«Սիոն»ի առաջին պրակները տպուած էին արդէն երր, 22 Ապրիլին, Վատիկանէն մեր ծեռքը հասաւ հետեւեալ հեռագիրը, ի պատասխան Նորին Ամենապատութեան Սրբազն Քահանայապետին Ա. Զատկի առթիւ յղած չնորհաւորական հեռագրին. —

Նորին Ամենապատռութիւն եղիչէ Տէրտէրեան  
Հայ Օրթոսոքս Պատրիարքարան  
Երուսաղէմ, Խորայէլ

Մեծապէս շնորհակալ Զեր Զատկական շնորհաւորութիւններէն՝ Նորին Սրբութիւն Յովհաննէս - Պօղոս Բ. Պապը խնդրած է մեղմէ վստահեցնել Զերդ Ամենապատռութիւնը իր ազօթքներուն համար։ Զերմ շնորհաւորութիւններով և որտադին բարեմաղթութիւններով։

ԿԱՐՏԻՆԱԼ ՔԱՅԱՐՈՂԻ  
Քարտուղար Վատիկանի

Հրէից Պատեքի (Բաղարջակերաց) տօնին առիթով, Մարտի 27ին, Ամեն. Սրբ. Պատրիարք Հայրը շնորհաւորական հեռագիր մը յղած էր Խորայէլի Նախագահին, որմէ ստացուած է հետևեալ պատասխանը, ստորագրութեամբը իր քարտուղարին. —

Երուսաղէմ, 28 Մարտ 1980

Նախագահ Նավօնը իր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնէ Զերդ Ամենապատռութեան, Պատեքի տօնին առթիւ Զեր ըրած բարեմաղթութիւններուն համար, և կը յղէ իր սրտագին շնորհաւորութիւնները Հայ համայնքին, մօտալուտ Զեր մեծ տօնին առիթով։

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲՆՄԱԿԱՆՔ

● Եր. 1 Մարտ. — Ս. Կիւրդի Երուսաղիմայ հայրապետին; Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Կիւրդի սեղանին վրայ, Մայր Տաճարի աւանդատան մէջ՝ ժամարարն էր Հոգչ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան։

● Կիր. 2 Մարտ. — Անառակին: Ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ։ Ժամարարն էր Վանուց Տեսուցը՝ Հոգչ. Տ. Ական Վրդ. Դարիոպեանց Տեսուցդին պատճառաւ քարտուցուեցաւ։

● Գչ. 3 Մարտ. — Մեծ Պահոց առաջին Հրկումը կատարուեցաւ ի Ս. Հրեշտակապետ, ուր քարոզեց Հոգչ. Տ. Մեսրոպ Արդ. Մութափեան, Նիւթ ունենալով՝ Պրոպատիկէի աւազանին մօտ պարկող անդամալոյժի բռնժման հրաշքը։

● Եշ. 6 Մարտ. — Մայր Տաճարին մէջ կատարուած Մեծ Պահոց առաջին Նկումինը քարոզեց Հոգչ. Տ. Անուշաւաւն Վրդ. Զջանեան, մեկնարանին պատուղ Բնակնիի աւետարանական առակը։

● Եր. 8 Մարտ. — Ս. Յովհաննու Երուսաղիմայ հայրապետին; Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Հոգչ. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան։

● Կիր. 9 Մարտ. — Ցեսեսին; Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Աստուածածնայ իսրաւանին վրայ։ Ժամարարն էր Հոգչ. Տ. Վանիկ Արդ. Մանկասարեան։

● Գչ. 11 Մարտ. — Նկումին ի Ս. Հրեշտա-

կապետ քարոզեց Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովհակիմեան, իսունով զղջումի ու ապաշխարութեան կարևորութեան մասին։

● Եշ. 13 Մարտ. — Նկումին ի Ս. Յակոբ քարոզեց Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովհակիմեան, ընարան ունենալով «Արևագալի աղօթքներէն և լուսովզ քո, Քրիստոս, ամենեքեան լուսուրեցաք» Յայտնեց թէ լուսարազմ մեր ժողովուրդը միշտ երգած է փառքը լոյսին։

● Ուր. 14 Մարտ. — Վաղուան Քառասուն Մանկանց տօնին առթիւ կէսօրէ ետք լուսաղական ժամերգութիւն կատարուեցաւ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, իսկ Երեկոյեան՝ «Եկեսցէի» (Նսկման) արարողութիւն, որու ընթացքին վարդապետական իր առաջին քարոզը խօսեցաւ Հոգչ. Տ. Մանուէլ Վրդ. Երկաթեան, ընկերով պատմականը Սերբաստիոյ լիճը նետուած քառասունին։ Ժողովուրդը իր բարեկապատական զդացումները արտայայտած էր մօմավառութեամբ և ձեթի նուրիբումով։

● Եր. 15 Մարտ. — Ս. Քառասուն մանկանցն Սերբաստիոյ; Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր։ Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւաւն Վրդ. Զջանեան։ Վերաբերումը կատարուեցաւ 40 մանկանց նկարին առջև շինուած շարժական սեղանին վրայէն, որուն դիմաց կաթուայի մը մէջ կը պլուային 40 գունաւոր կանքեղներ՝ աւանդական սահցազատ լիճը խօրհրդանշով։

— կէսօրէ ետք, վաղուան Դատաւորի կիրակիի առթիւ, Լուսաբարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպոս. Ասւանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ» հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Ս. Գերեզմանի և Գիւտ Խաչի այրի ուխտերէն ետք, վերջնոյ կից Ս. Գր. Լուսաւորի եկեղեցին մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը: Ազակատարուեցաւ Տնօրինական Սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Հայրիկ Արք. Գալաջեան:

● Կիր. 16 Մարտ. — Պատարին: Գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորի եկեղեցին մէջ: Ազա Գերշ. Տ. Եանէ Արքեպոս. Աձմէան հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և նախագահեց նոյնին և Պատանատեղուոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանգէս թափօրին:

● Եշ. 18 Մարտ. — Հսկումին ի Ս. Հրեշտակապետ քարոզեց Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, մեկնարաննելով Սերմնացանի աւետարանական առակը:

● Եշ. 20 Մարտ. — Հսկումին ի Ս. Յակոբ իր անդրանիկ քարոզը խօսեցաւ Հոգչ. Տ. Անուշաւ Վրդ. Պալեան, բնարան ունենալով չՏէր, ուսո՞ւ մեզ կալ լալօթաւ, Փարիսեցիի և Մաքսաւորի առակին միջոցաւ յայտնելով թէ երբ է որ մեր աղօթքները կը գառնան ընդունելի:

● Ուր. 21 Մարտ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս.:

● Եր. 22 Մարտ. — Ս. Գրիգորի Լուսաւորին մերոյ (Մուսե ի Վիրապ): Առաւտեան ժամերգութեան աւարտին, Ս. Լուսաւորչի մատունքը իր հանդիսարանէն թափօրով փոխագրուեցաւ Աւագ Խորան, ձեռամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Պարիկեանի: Ս. Պատարագը մատուցուեցաւ աւագ Պատան Ս. Լուսաւորչի սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ռուբէն Վրդ. Յովիակիման:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. ի գլխաւորութեամբ, Միաբան Հայրիկ ինքնաշարժերով բարձրացան Զիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կառաւցուած մեր վրանին տակ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւն և նախատօնակ:

— Գիշերասկզբին, Հոգչ. Տ. Անան Վրդ. ի գլխաւորութեամբ, նոյն վայրին մէջ պաշտուեցան Եկեղեցի և Հակման կարգեր, և յետոյ՝ գիշերային և առաւտեան ժամերգութիւններ, որոնց աւարտին, ըստ սովորութեան, Սրբավայրին Տեսուչը (Հոգչ. Տ. Հայրիկ Արք. Գալաջեան) Ս. Պատարագ մատոյց Համարձման մատրան մէջ: Արքորոշութիւնները մինչև ուշ գիշեր:

● Կիր. 23 Մարտ. — Գալստեան: Առաւտուեան ժամը 8 ին, գարձեալ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրիկ ինքնաշարժերով բարձրացան 2 ինքնիաց լեռ ու Հրաշափառով մուտք գործեցին Համբարձման Սրբատեղին, ուր կառաւցուած մեր վրանին տակ եպիսկոպոսակար իսոյր ի գլուխ պատարագեց Հոգչ. Տ. Անան Վրդ. Ղարիկեան:

● Գշ. 25 Մարտ. — Վերջին Հսկումին ի Ս. Հրեշտակապետ նախագահեց և քարոզեց նոյն վանքի Տեսուչը, Հոգչ. Տ. Անան Վրդ. Ղարիկեան, խօսելով Դուկասու Աւետարանին մէջ յիշուած 10 բորոտներու բժշկութեան մասին:

● Եշ. 27 Մարտ. — Մեծ Պահոց վերջին Հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Պարիկեան:

● Ուր. 28 Մարտ. — Խ. օր մեծ պահոց: Առաւտուուն Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Արեւագալի վերջին ժամերգութիւնը, իսկ երեկոյեան վերջին հաւազականի ժամերգութիւնը:

● Եր. 29 Մարտ. — Ցիշատակ յարուբեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Քիւմագիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անան Վրդ. Պալեան:

— Վաղուան Մարկարդի տօնին առթիւ, կէսօրէ ետք, Ամեն. Ս. Պատարիարք Հօր Գրիաւաւորութեամբ, Միաբանութիւնը Հրաշափառով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, բանալով շարքը Աւագ Եօթնեակի հանդիսութեանց: Ժամերգութիւնն ու նախատօնակը մէջ, նախագահութեամբ Լուսաւարապետ Գերաշնորհ Տ. Հայրիկ Արքեպոսի: Ազա կառաւուեցաւ Տնօրինական Սրբատեղիներու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Վանիկի Արքեպայ:

● Կիր. 30 Մարտ. — Խաղկազարդ: Գիշերային և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան: Ազա, Գերշ. Տ. Եանէ Արքեպոսի Գրիաւաւորութեամբ, կատարուեցաւ մեծ ահանդէսթափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղուոյն շուրջ և Անդասատանց թափօրականք ի ձեռին ունէին արմաւենեաց և ձիթենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղաղոց և Ասորեց թափօրները: Կէսօրը անցած էր երբ արարողաւթիւնները աւարտեցան, որմէ ետք Միաբանութիւնը, առաջնորդութեամբ Հայ Երիտ. Միաւթեան արիներուն, վերագարձաւ Մայրավանքը և Հայոց թագի մուտքէն ուր զիսորուրդ քո գալստեանց շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան:

— Կէսօրէ ետք, Հքեղօրէն զարգարաւած

Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Անդաստան», ազատ տօնին յատուկ սրտագրաւ մեղեդիներով ընդմիջուած երեկոյեան ժամերգութիւն, բոլորն աւ նախագահութեամբ ֆերշ. Տ. Կիւրեղ Եպոս-Դարիկեանի: Հոգչ. Տ. Անան Վրդ. կարդաց անուստացանկը վարագոյր բացող հաւատացեաներուն և կոչ ըրաւ ներկաներուն, որ իրենց լուժաներով նպաստեն Ազունիէ Ազգ-Բուժարանին: Այդ նպատակու, եկեղեցւոյ զոյտ մուտքերուն զետեղուած էին պնակներ:

● Դ. 1 Ապրիլ. — Աւագ Երեքարի (Յիշատական կուսանց): Ա. Պատարագ. մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի գաւթին արեւելակողմը գտնուող Ա. Յովհաննէս Աւետարանչի հայապատական մատրան մէջէ ժամամարտն էր Հոգչ. Տ. Ռուրէն Վրդ. Յովհակիմեան: Ա. Թարգմանչաց վարժարանի աշակերտութիւնը ստացաւ Ա. Հաղորդութիւն: Ազատ կատարուեցաւ ուսումնառաց: բացմօր Տաճարէն ներս: Թափօրագետն էր Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զոյչանանան:

● Եշ. 3 Ապրիլ. — Աւագ Հինգեարի (Յիշատակ Ընթեաց): Առաւոտեան ժամերգութեան աւարտին, Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Կարգ Ապաշխարոցաց:

— Կարճ գագարէ մը ետք, Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ հանդիպաւոր Ա. Պատարագ: Պատարագին էր Միացեալ նահանգներէն հիւրաբար Ա. Ալթոն ժամանած ֆերշ. Տ. Հմայեակ Եպս. Խնդոյեան, որ կատարեց նաև ընթերցումը Ա. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ձառին: Բաւական թիւով ժողովուրդ ստացաւ Ո. Հաղորդութիւն:

— Կէորէ ետք, Ամեն. Ա. Պատրիարք Հօր նախագահութեամբ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Շտունալուայի հոգեգղուաւարարութիւնը: Եկեղեցւոյ զոյտ գասերը Եցուն էին հիւրերով, որոնց չարքին՝ Ներուսաղէմի Քաղաքացական Ն. Ամեմ. Թէստի Քոլէք, նահանգային կառավարիչ Տիւր Ռաֆայէլի, Կրօնից նախարարութեան ներկայացուցիչ Տիւր Խորայէլ Լիփիէլ և Անկլիքան Արքեպոս. Ֆերշ. Տ. Ֆայէք Հատուատ, որ, ըստ սովորութեան, զգեստաւորուելով Անգլիքէն Եպուով Ա. Աւետարանի ընթերցում կատարեց Աւագ Սեղանի բնմէն:

— Ժամը 4.30ին, փոքր թափօր մը, գլխաւորութեամբ Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զըզչանեանի, մեկնեցաւ Ա. Հրեշտակապետաց Եկեղեցին: Չարչարանց խորանին առջե կատարուած Ա. Ա. ետարանի ընթերցումէ ետք, թեթեօրէն մաղուող անձրէի տակ, թափօրը յառաջացաւ գէպի Եկեղեցւոյ գաւթին մէջ գտնուող Ա. Զիթենիի ծառը, որուն դիմաց կատարուած կարճատե արարողութենէն ետք Հոգեշնորհ Հայրը խօսք առնելով՝ պարզեց

հանգամանքները մեր Տիրոջ դատավարութեան, տալով նաև պատմականը նոյն վանդին: Հոգչ. Հայրը խօսեցաւ նաև Ա. Փրկչի վանուց գաւթին մէջ, որը մեկնեցան թափօրականը ազատ, չարականներու երգեցողութեամբ: Ըրաւ նաև հակիրճ պատմամբ: Յուղի էր պահճ կը բարձր կամատարած մութին մէջ խօսք առաջ Դ. Հայրէակ Եպիսկոպոս, որ Ել Յուղա արտաքս, և էր գիշերը բնաբանով կուռ քարոզով մը վեր հանեց լւացի գիշերուան բարերար և գրկարար նշանակութիւնը:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտամական կարգ Խաւարձան, տիրապղեցիկ խորհրդաւորութեամբ: Յուղի էր պահճ կը բարձր համատարած մութին մէջ խօսք առաջ Դ. Հայրէակ Եպիսկոպոս, որ Ել Յուղա արտաքս, և էր գիշերը բնաբանով կուռ քարոզով մը վեր հանեց լւացի գիշերուան բարերար և գրկարար նշանակութիւնը:

● Ուր. 4 Ապրիլ. — Աւագ Ուրբար (Յիշատակ Խաչելութեան): Կէսօրը քիչ անց, Ա. Յարութեան Տաճարի վերնատան մեր մատրան մէջ կատարուեցաւ Կարգ Խաչելութեան: Հանդիսապետն էր ֆերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս:

— Ժամը 4.30, Ա. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մեծահանդէս Կարգ Թաղման Քրիստոսի, նախագահութեամբ Ամենապատիւ Ա. Պատրիարք Հօր:

● Եր. 5 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճագալոյց Ա. Զատիկի): Առաւոտեան ժամը 9.30ին(\*), Սուրբ Յարութեան Տաճարի գուռը բացուեցաւ մեր Կողմէ, բանալին առնուելով Աւագ Թաղման Հոգչ. Տ. Ասպիտ Վրդ. Պալեանի ձեռք:

— Ժամը մը ետք, ֆերշ. Տ. Շահն Արքեպոս. Անձմենի գլխաւորութեամբ, Միաբանութիւն մեկնեցաւ Ա. Յարութեան Տաճար: Ա. Գերեզմանին շուրջ մէկ անդամ գառնալէ ետք թափօրը ուղղուեցաւ Տաճարի մեր Տեսչարանը: Արկելեան նկեղեցիներու համանքներէն և կիպրոսէն ու Յունաստանէն ժամանած Յոյն ուխտաւորներու բազմութեամբ լեցուած էին Տաճարին գրեթէ բոլոր մասերը: Ժամը 11ին կատարուեցաւ Կնքումը Ա. Գերեզմանի դրան, ի ներկայութեան պետական դէմքերու: Կէսօրին, Յունաց Միաբանութիւնը մուտք գործեց Տաճար, որ կէտ ժամ խնցած իրենց մեծահանդէս թափօրը սկսաւ, գլխաւորութեամբ ֆերշ. Տ. ձէրմանօս Արքեպոսին, որ եռազարձ թափօրի աւարտին, մեր Լուսահանին: Հոգչ. Տ. Անան Վրդ. Ղարիպեանի հետ մոտաւ Ա. Գերեզման, ուրէկ երեք վայրէկեան ետք դուրս պիտի գար նուիրական լոյսը, կարելի փութով փոխանցուելով Ա. Գերեզմանի ըրջափակին:

(\*) Աւագ Ուրբար օրը Յունաց՝ իսկ Աւագ Յարաթ օրը Հայոց իրաւունքն է բացումը կատարել Ա. Յարութեան Տաճարի գրան: Զատիկիը միասին տօնուած տարիներուն, Տաճարին մուռը կը բացուի ժամ մը ուշ, կատինաց էլուդուուր կատարած կարճատե արարողութենէն ետք:

վրայ հայող մեր վերնամատրան պատշգամին մէջ իր տեղը զրաւած դերը. Տ. Շահէ Մրարազանին, որ անով կ'օրնէ վարը խռնուած ծովածաւալ բազմութիւնը, Անմիջապէս ընթացք կ'առնէ մեր թափօրը, որ Տաճարին հայկական և յունական բոլոր զանգերուն և կոչնակներուն զուարթ զօղանչներուն ընդմէջնէն երից շըջանը կ'ընէ Ս. Գերեզմանին, երգելով Յարութեան շարականներ: Թափօրը կը գիխաւորէր, ըստ սովորութեան, Լուսահան Հայրսուրը, եպիսկոպոսական խոյր ի գլուխ, իսկ Դպտիններ և Ասորիններ թափօր կազմած կը հետեւէին մեր թափօրին ժամը 2.30ին, Միարանութիւնը համբայ ելաւ գէպի Մայրավանքը ձամբու կէսին, Դամինի բերդին դիմաց, Հանդիսապես Սրբազանն ու Լուսահանը զգեստաւորուեցան և առաջնորդութեամբ Հ. Մ. Ը. Ի. ի. Հ. Ե. Մ. ի. և Ալբաքասի արիներուն և արենոյշներուն, թափօրը շարժեցաւ Քրիստոս Յարեաւ շարականի երգեցողութեամբ: Հանդիսապես Սրբազանին Մայր Տաճարին մէջ կատարած Ս. Աւետարանի ընթերցումը ժամուան մը դադար բերաւ հանդիսութիւններուն:

— Ժամը 4ին, Մայր Տաճարին մէջ սկսաւ ձրագալոյցի արարողութիւնը, որուն աւարտին, Քրիստոսի Յարութեան աւետիսով բացուեցաւ վարագոյը Աւագ Սեղանին և սկսաւ իրինադէմի խորհրդաւոր Ս. Պատարագը՝ զոր մատոյց Հոգը. Տ. Ասպետ Վրդ. Պալեան: Ապա կատարուեցաւ Ս. Զատկի նախատօնակի նախագահութեամբ Գերը. Տ. Կիւրեղ Եպիսկոպոսի: Արարողութեան աւարտին, Ալյոս յարեաւ շարականի երգեցողութեամբ Միարան Հայրեր և դպիրներ զգեստաւորեալ բարձրացան Սեղանատառն ընթրիքի:

● Կիր. 6 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՈՅ ՄԵՐՈՅ: Կէս գիշերէն ետք ժամը 1.30ին, Մայրավանքի մեծ զանգը ստրի է հանած արգէն Միարանութիւն և ժողովուրդ: Կէս ժամ ետք, Գերը. Տ. Կիւրեղ Եպս. Պարիկեանի դըլխաւորութեամբ, Միարան Հայրեր կը մեկնին Ս. Յարութեան Տաճարը. Ս. Գողդոթթայի վրայ կատարուած ուխտէն ետք, Տաճարի վերնատան մեր մատրան մէջ պաշտօւեցաւ գիշերային ժամերգութիւնը և մաս մը սուաւուեան ժամերգութիւնէն մինչև Հարց, երբ Միարանութիւնը իջաւ շըջափակը Ս. Գերեզմանին, շարունակիլու համար ժամերգութիւնը, երից դարձմամբ Սրբավայրին շուրջ: Ս. Գերեզմանի դրան իւղաբերից Աւետարանի ընթերցման աւարտին կատարուեցաւ Անդաստանը ու երգուեցաւ Էլաչի քո Քրիստոս: Մեր թափօրին կը հետեւէին Դպտոց և Ասորւոց թափօրները: Մէկ ժամուան դադարէ ետք, Գերը. Հանդիսապես Սրբազանը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի կիսաւու Քերեղմանին վրայ և քարոզեց օրուան մեծ տօնին:

Հուրդ, ընաբան ունենաւով ՀՀէ աստ, քանզի յարեւաւ: Ս. Պատարագը ձայնասփռուեցաւ հարայէւեան ռատիսկայանէն: Վանք դարձին Հայոց Թաղի մաւտքէն, Քրիստոս յարեւաւ շարականը երգելով Միարանութիւնը յառաջցաւ և բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը Յարութեան աւետիսը տալէ ետք օրնեց ու արձակեց ամէնքը: — Կէսօրէ ետք, Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատկական մեծ Անդաստանը՝ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարքը Հօր:

● ԲՀ. 7 Ապրիլ. — Բ. օր Ս. Զատկի (Յիշասի մենելց): Ամեն. Ս. Պատրիարքը Հայրը մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ, քարոզեց Յարութեան մեծ խորհուրդին շարչ և ապա, Կենաց Փայտի մասունքն ի ձեռին և ամպհովանին ներքին, նախագահուց Մայր Տաճարին մէջ կատարուած եռագարձ մեծահանգէս թափօրին, որուն ընթացքին վարդապետներ ի ձեռին ունէին սրբոց մասունքները: Ցետոյ երգուեցաւ Արքագալի ճամանակարհ: շարականը, որուն կը արեւածի երգեցութեամբ, ամէնքը բարձրացան Պատրիարքարան, ուր նորին Ամենապատութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց բոլորին:

● ՔՀ. 8 Ապրիլ. — Գ. օր Ս. Զատկի: Ս. Պատարագը մատոյց ուղեցաւ Ս. Գլխագրի մատրան մէջ: Ժամարարն էր Հոգը. Տ. Համբարձում Արդ. Քէշիչնեան, Ցետոյ կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն՝ խորամատոյց ուխտաւորաց ննջեցեալներու հոգիներաւն համար:

● ԾԲ. 12 Ապրիլ. — Գլխատում Ցովինանոն Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Հոգը. Տալյայնեան:

● Կիր. 13 Ապրիլ. — Նոր Կիրակի (Կիբանացակի): Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամերգութեան, Լուսահանը՝ Հոգը. Տ. Սեւան վրդ. Ղարեպեան:

● ԾԲ. 19 Ապրիլ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Հոգը. Տ. Բարսեղ Արդ. Գալէմտէրեան:

— Կէսօրէ ետք, վաղուան Աշխարհամատրան կիրակիի առթիւ, Գերը. Տ. Կիւրեղ Եպս. Պարիկեանի գլխաւորութեամբ, Միարան Հայրեր Հէրաշափառուով մաւտք գործեցին Ս. Յարութեան Տաճարը, ուր պաշտօւեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ վերնատան մեր մատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրացեան էր Հոգը. Տ. Բարսեղ Արեղայ:

● Կիր. 20 Ապրիլ. — Աւետարակարան (Կանաչ Կիրակի) և Աւետարան Ս. Ասուածածին: Գիշե-

բային և առաւտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատրան մէջ: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եսպիսկոպոս մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոնի Ս. Գերեզմանին վրայ և նախագահեց Շնդաստանին:

● Բ. 21 Ապրիլ. — Ս. Կոյսի Աւետման տօնը այս տարի զուգագիպած ըլլալով Աշխարհամատրան Կիւրակիին, յետագութեցաւ վաղուան: Առաջդ, երեկոյեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր նախատօնակ' նախագահութեամբ Գերշ. Տ. Եանէ Արքեպոս. Անէմեանի:

● Գ. 22 Ապրիլ. — Առաւտուուն, Գերշ. Տ. Եանէ Արքեպոսի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով իշան Գեթեմեանիի ձորը ու Հրաշափառուով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց և քարոզեց Գերշ. Հանդիսապետ Արքանը, բնաբան ունենալով Դարրիէլ Հրեշտակապետին Աւետման պահուն Տիրամօր ուղղած խօսքերէն «Մի երկնչիր, Մարդիամ, զի գտեր չնորհն յԱստուածոյ» (Ղկո., Ա. 30):

● Եր. 26 Ապրիլ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխագիր: Ժամարարն էր Հոգ. Տ. Ասկի Արդ. Արդիքեան:

● Կիր. 27 Ապրիլ. — Կարմիր Կիւրակի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, վերնատան մեր մատրան մէջ: Պատարագեց և քարոզեց Հոգ. Տ. Մեսրոպ Արդ. Մութափեան, բնաբան ունենալով Քայց եթէ ինչ ի Քրիստոս նոր արարած իցէ. զի հինն անց, և արդ նոր եղեւ ամենայն» (Բ. Կորնթ., Ա. 17):

### Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Կիր. 2 Մարտ. — Հոգ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան ներկայ գտնուեցաւ Ռումանական Եկեղեցւոյ Պատր. Փոխանորդ Վասիլ Թիւրովիստէանիւրի մեկնութիւն և Արշիմանտրիթ Քօրնիլա Վասիլի պաշտօնի ձեռնարկելու առթիւ տրուած ընդունելութեան:

● Բ. 3. 17 Մարտ. — Բրիտանական նոր Հիւպատոս Պր. Տօնաւոտ Համելէյ իր առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօրի Հիմագիր Ս. Բենեդիկտոսի տօնին և ծննդեան 1500 ամեայ Յարելեանին առթիւ, Սիհոն Լերան Տորմիսիսներու Եկեղեցւոյ մէջ մատուցուած հանդիսաւոր Ս. Պատարագին և կատարուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Անուշաւան Վրդ. Զղջանեան, Հոգ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան և Տիար Գէորգ Հնդիւեան:

● Գ. 25 Մարտ. — Յանաւտանի անկախութեան տարեդարձի տօնին առթիւ, Անէլէն Հիւպատոսսի կողմէ, Հիւպատոսսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Հոգ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան և Տիար Գէորգ Հնդիւեան:

Հիւպատոսսի կողմէ, Հիւպատոսսարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Գիւանապետ Գերշ. Տ. Եանէ Արքեպոս. Անէմեան:

● Ուր. 28 Մարտ. — Միացեալ նահանգներէն Գերշ. Տ. Հմայեակ նոս. Խնդոյեան հիւրաբար ժամանեց Ս. Աթոռ և Զատկի տօնը մեր մէջ անցընելէ ետք ՑԱպրիլ, Չորեքշարթի օր, վերադարձաւ իր պաշտօնավայրը՝ Միամի:

● Ել. 3 Ապրիլ. — Կէսօրէ ետք ժամը 4ին, Երուաղէմ ժամանեց Եթովպական Եկեղեցւոյ պետն. Ամեն. Թէքլահայմանօթ Պատրիարքը: Դիմաւորութիւնը կատարուեցաւ Ես Փայի դրան մօտ, ուրէկ Մեծապատիւ Հիւրը թափօրով և Հայ Արքներու առաջնորդութեամբ յառաջացաւ մինչև Քրիստոնէից թազի իրենց վանքը: Մեր կողմէ գիմաւորութեան գացած էին Գերշ. Տ. Եանէ և Գերշ. Տ. Կիւրեղ Արքանցը: Հարդարապետին կարգայան՝ բարդագետները դաշտած էին Պէն-Կուրեն օդակայան՝ բարի դալուստ մազթելու:

● Բ. 7 Ապրիլ. — Կէսօրէ ետք, Եթովպիոյ Պատրիարքը այցելեց Ս. Յարութեան Տաճար և դիմաւորուեցաւ երեք յարանուանութեանց ներկայացուցիչներու կողմէ Մեր կողմէ ներկայ էին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերշ. Տ. Եանէ և Տ. Կիւրեղ Արքանցներ և Հոգ. Հայրերը: Բարձրապատիւ Հիւրը պատուասիրուեցաւ Տաճարի մեր Տիրաչարանին մէջ:

● Գ. 8 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, Առւրբ Զատկի տօնին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, չնորհաւորական այցելութիւն տուաւ Լատինաց Պատրիարքին, որ ժամ մը առաջ նոյն առիթով և իր հետուորդներով այցելութեան եկած էր մեր Պատրիարքարանը:

— Նոյն առիթով, Պատրիարքարան չնորհաւորութեան եկան Երուսաղէմի Վահեմաշուրք Քաղաքապետը, նահանգային Կառավարիչը, Հոգ. Ապահովութեան Պետը և Կրօնից նախարարութեան ներկայացուցիչը:

— Միացեալ նահանգներու զանազան շըբջաններէն 15 քաղաքապետներ այցելեցին Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Հրջեցան Վանուց այլազան բաժինները:

● Գ. 9 Ապրիլ. — Նոյն առիթով, Կէսօրէ առաջ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ի գլուխ Միաբանութեան, չնորհաւորական այցելութեան զնաց Յունաց Պատրիարքին: Ապա, հետու ունենալով Դիւնապետ Գերշ. Տ. Եանէ Արքանցն, այցելեց Պատրիարքան նուիրակին և Անկիլիքան Արքեպոսին: — Փախադարձարար Պատրիարքարան չնորհաւորութեան եկան Յունաց Պատր. Փոխանորդը և Ֆրանչիսկունց Կիւրեթուրը, հանդիրձ Միաբանութեամբ, Հապել շաց օրերս Ս. Երկիր այցելող Պատրիարքն

«ՍԻՐՆԵՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԿԻՒՂԵՆԵԱՆ ՄԱՏԵՆԱԿԱՐԱՆԻ  
ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄՔ ՍՏՈՑԱՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

**Ճայիկան Սովետական Հանրապիտարան — Հատոր 2, Արդիշտի — Գեղերվանս, Գլխաւոր իշխագիր՝ Վ. Հ. Համբարձումեան:** Երևան, 1976, էջ 719:

**Անցյաղը Արլորը — Յովհաննէս Թումանեան:** Երևան, «Հայաստան» Հրատարակչութիւն, 1976:

**Նաղաջ և Լավաջը — Աշոտ Սահրատեան:** Երևան, «Յովհետական Գրող» Հրատ., 1976:

**Խուսաւոր Ճամբաներ — Արտակ Արքեպս. Մանուկեան:** Թեհրան, Տպ. «Նայիրի», 1976, էջ 258:

**Արակարզ Յանձնարարութիւն — Բորիս Վիճուկուր:** Թարգմանեցին՝ Ռ. Այվազեան և Մ. Մա-

նուկեան:

**Անուրիան Բողոքի Գիրքը — Բելլա Դիմոս:** Թարգմանեց՝ Կ. Լ. Սարիբեկեան:

Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 243:

**Բնուրիան Բողոքի Գիրքը — Բելլա Դիմոս:** Թարգմանեց՝ Կ. Լ. Սարիբեկեան:

Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 270:

**Մժզուկ — Թմբուկ — Յակոբ Պարսնեան:** Երևան, «Սովետական Գրող» Հրատ., 1977, էջ 86:

**Աշխարհագրական Հանելուկներ — Խաղեր — Յովհաննէս Զթշեան:** Երևան, «Էլուս Հրատարակ-

չութիւն, 1977, էջ 129:

**Դ. Կեմիրնեանի «Վարդանանք»:** (Պրոբլեմատիկան և Պոետիկան) — Վահագն Մկրտչեան:

Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 141:

**Նոր-Զուղայի Ազգ. Խառնութ (1888-1913) (25 ամեայ Յորելեանի առթիւ):** Տիգրան Թ.

Անդարեանց (Խմբագրող): Նոր-Զուղայ, Տպ. Ամենափրկչեան Ս. Վանաց, 1913, էջ 27:

**Կոնցերտ Զութակի և Նուագախմբի համար, Կալավիր — Առնօ Բարաջանեան:** Երևան, «Հայա-

տան» Հրատարակչութիւն, 1973, էջ 82 և 23:

**Բոլորից Շատ Փոլորին և՛ Միրում — Մարտ Արրաջամեան-Թաթիկեան:** Նկարիչ՝ Գ. Աղասեան:

Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977, էջ 31:

**Ա. Ս. Պուշկին — Ա. Ս. Ալայեան (Թարգմանիչ):** Նկարիչ՝ Անատոլի Գրիգորեան:

Երևան, «Սովետական Գրող» Հրատարակչութիւն, 1977:

**Գրական Մշշակներ — Կարլէն Գանիէլեան:** Երևան, «Սովետական Գրող» Հրատ., 1977, էջ 387:

**Ասոււածաշունչ Մատեանի Հայկական Բնագիրը (Մատեանագիտութիւն):** Յ. Ս. Անասեան:

Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչութիւն, 1976, էջ 310-667:

**Ֆառուր — Վոլֆկանց Կիօմիէ: Գերմաներէն բնագրեն թարգմանեց՝ Կարապետ Գ. Խոլիսովէյեան:**

Անթիւիաս, Տպ. Կաթողիկոսութեան Հայոց Սեծի Տանն Կիլիկիոյ, 1970, էջ 157:

**Հայ Գրողներ — Ալբոմ՝ Յն գրողներու Նկարները:** Երևան, «Հայաստան» Հրատ., 1976:

**Բարի Ակոււսը — Հանրի Զարեան:** Նկարիչ՝ Անատոլի Գրիգորեան:

Երևան, Հրատարակչութեան Սովորման Հայոց Սեծի Տանն Կիլիկիոյ, 1976, էջ 75:

ու տեղւոյս Եպիսկոպոսը և Ասորւոց Եպիսկոպոսը, բոլորն ալ իրենց Միաբանութեան անդամներով, Պապական Նուիրակը, Անկլիքան Արքեպս. Յոյն-Կաթոլիկներու, Ասորի-Կաթոլիկներու և Մարտոնիթ Համայնքը Մեծաւորները, Տարմիսիոններու վանքը Մեծաւորը, Խուտերականներու Եպիսկոպոսը և Փրօփիմը, ինչպէս նաև Հայութաթողիկէ Հասարակութեան առաջնորդը և Ս. Քաղաքիս Հիւպատոսական անձնակազմը:

— իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպոս, Վարդապետ Հայրերու ընկերակցութեամբ, Փախադարձ այցելութեան գնաց Փոքր յարանուանութեանց հոգեւոր պետական:

● Բշ. 14 Ապրիլ. — Երեկոյեան ժամը 6ին, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Պատրիարքարանի դաւակին մէջ Փառայել Թագուհուոյ ծննդեան տարեթարձի և Պէաթրիս Թագուհուոյ գահակալութեան առիթներով տրուած բնդունելութեան ներկայ եղան Գերը. Տ. Կիւրեղ Եպոս, Պարիկեան, Հոգչ. Տ. Ասպետ Թարգման Հոգչ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

● Դշ. 15 Ապրիլ. — Կէսօրէ ետք, ձերմակ Բուս Եկեղեցւոյ հովիւ Հայր Անթօնին կրապ-

պէի կողմէ, Զատկական տօներու առիթով տրուած բնդունելութեան ներկայ գոնուեցան Հոգչ. Տ. Անուշաւան Վրդ. Զոգանեան, Հոգչ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան և Հոգչ. Տ. Ասկի Ապդ. Որդիքեան:

● Բշ. 21 Ապրիլ. — Խարայէլի Անկախութեան 32րդ տարեգարձի առթիւ, կէսօրին, Երուսաղէմի Քաղաքապետ Վահեմ. Թէտի Քոլէքտի կողմէ, Պատիքի Բերդի մէջ տրուած բնդունելութեան ներկայ գոնուեցան Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, Գերը. Տ. Շահէ Արքեպս. և Աւագ Թարգման Հոգչ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

● Դշ. 30 Ապրիլ. — Երեկոյեան, Հուլանաւական Հիւպատոսարանի մէջ, ծուլիսանա հրաժարեալ Թագուհուոյ ծննդեան տարեթարձի և Պէաթրիս Թագուհուոյ գահակալութեան առիթներով տրուած բնդունելութեան ներկայ եղան Գերը. Տ. Կիւրեղ Եպոս, Պարիկեան, Հոգչ. Տ. Ասպետ Վրդ. Պալեան:

● Դշ. 31 Ապրիլ. — Կէսօրէ ետք, ձերմակ Բուս Եկեղեցւոյ հովիւ Հայր Անթօնին կրապ-